Հ Ր Ա Մ Ա Ն N 296-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«20» ԱՊՐԻԼԻ 2017 Թ. **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2017 թվականի ապրիլի 13-ի N 02/13/1/945-17 գրությունը և Գ. Հարությունյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության բաժնի պետի (ծածկագիր՝ 14-2.2-103) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Գևորգ Վլադիմիրի Հարությունյանի հետ 2017 թվականի ապրիլի 20-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ